ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. մայիսի 4-ի թիվ 3 նիստում
Ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան
«4» մայիս 2020թ

ԳՊՀ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԻ

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ԳԱՎԱՌ - 2020

Սիրելի՛ ուսանողներ,

դուք սովորում եք բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանում՝ մագիստրատուրայում, ինչը ենթադրում է նոր պահանջներ, առավել պատասխանատու և լուրջ մոտեցում, հետևողական ու նպատակային աշխատանք, ուսումնական և գիտահետազոտական գործընթացների զուգակցում, կրթական տարբեր ծառայություններից օգտվելու հնարավորություններ:

Դուք պետք է խորացնեք ձեր տեսական և գործնական գիտելիքները, շարունակաբար ընդլայնեք աշխարհայացքային և մասնագիտական իմացության սահմանները, ձեռք բերեք նոր հմտություններ:

Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում կրթությունն իրականացվում է կրեդիտային համակարգով, գործում է սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման բազմագործոն կառուցակարգը, կարևորվում են մագիստրոսի և գիտական ղեկավարի համագործակցությունը, մագիստրոսական թեզի թեմայի ճիշտ ընտրությունը, թեզի պատրաստումն ու պատշաճ ձևով պաշտպանությունը:

Մագիստրոսական կրթական ծրագիրը նախատեսում է հետազոտական աշխատանքի մեծ ծավալ, մասնագիտության արդի հիմնահարցերի առավել խոր ուսումնասիրություն՝ հաշվի առնելով կրթության, գիտության, մշակույթի, տեխնիկայի, նորագույն տեխնոլոգիաների զարգացման միտումները և մասնագիտության բնույթն ու առանձնահատկությունները:

Ուստի, դուք պետք է դրսևորեք ստեղծագործական մոտեցում, ներգրավվեք նոր գիտական հայեցակարգերի ոլորտ և ձեռք բերեք ինքնուրույն գիտահետազոտական ու մանկավարժական աշխատանքի փորձ:

Դուք պետք է կատարելագործեք օտար լեզուների իմացությունը, համակարգչային գրագիտությունը, օգտվեք տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից, նպատակային օգտագործեք մագիստրատուրայում ուսանելու տարիները և դառնաք որակյալ մասնագետներ:

Մաղթում ենք ձեզ հաջողություններ:

ԳՊՀ ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.

Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայում ուսումնական գործընթացը կազմակերպվում է հետևյալ սկզբունքներով.

1) Ծրագրերում գրանցվելուց և հրամանագրվելուց հետո կազմվում է մագիստրոսի անհատական աշխատանքային մատյանը, որտեղ կատարվում են մագիստրոսական ծրագրերի ուսումնական և հետազոտական բաղադրիչների իրականացման ժամանակացույցով նախատեսվող բոլոր գրանցումները: Դրանք են.

ա) գիտական ղեկավար նշանակելու մասին տվյալները,

բ) մագիստրոսի կիսամյակային անհատական ուսումնական պլանների բովանդակության և դրանց կատարման մասին տվյալները (քննությունների և լուծարային շրջանում դրանց վերահանձնումների գնահատականները, կուտակած կրեդիտները), կիսամյակային, տարեկան հաշվետվությունները,

գ) ծրագրի հետազոտական բաղադրիչով նախատեսվող կրթական մոդուլների (գիտահետազոտական աշխատանքի, պրակտիկաների, գիտական սեմինարի) կատարման մասին տվյալները (ատեստավորման արդյունքները և կուտակած կրեդիտները),

դ) թեզի թեմայի առաջարկի ներկայացման, քննարկման և հաստատման մասին տվյալները,

ե) մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգի կատարման մասին տվյալները (գիտական ղեկավարի կարծիքն ու գնահատականը, մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի երաշխավորությունը, նշանակված ընդդիմախոսի կարծիքն ու գնահատականը, թեզի պաշտպանության գնահատականը):

2) Մագիստրոսի անհատական աշխատանքային մատյանը պահվում է տվյալ մագիստրոսական ծրագրի ղեկավարի մոտ, ով պատասխանատու է դրանում նախատեսված բոլոր գրանցումների ժամանակին և ճիշտ կատարման համար: Մատյանում համապատասխան գրանցումների հիմք են հանդիսանում ծրագրի բովանդակությամբ նախատեսվող բոլոր գործողությունների կատարումը հավաստող փաստաթղթերը՝ դասընթացների գնահատման թերթիկները, հետազոտական մոդուլների ատեստավորման թերթիկները, ուսումնառության անհատական ծրագրերը և այլն:

3) Ծրագրի հետազոտական բաղադրիչով նախատեսվող մոդուլների կատարման արդյունքները մատյանում գրանցվում են սահմանված նմուշի ատեստավորման թերթիկների և մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգով նախատեսվող եզրակացությունների հիման վրա:

4) Մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրում նախատեսվում է երկու հիմնական կրթամաս՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատաձևերը ներկայացվում են մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման նորմատիվ ժամկետներին համապատասխանող կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական բաղադրիչների ծավալների որոշակի համամասնությամբ /ըստ մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում/:

5) Ծրագրի ընդհանուր կառուցվածքը ներկայացված է աղյուսակում.

ա) ***Կրթամասերի բաշխումը տոկոսներով.***

Աղյուսակ 1

	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	3-րդ կիսամյակ	4-րդ կիսամյակ	Ընդամենը
Ուսումնական	90	80	70	0	60
Հետազոտական	10	20	30	100	40

բ) ***Կրթամասերի բաշխումը՝ ըստ կրեդիտների.***

Աղյուսակ 2

Կրթամաս	***Կրեդիտներ***
Ուսումնական	72
Ընդհանուր մասնագիտական դասընթացներ	6
Լրացական դասընթացներ	0
Հատուկ մասնագիտական դասընթացներ	66

Տիպոլոգային ծրագրի պարտադիր դասընթացներ *Տիպոլոգային ծրագրի կամընտրական դասընթացներ*	48 18
Հետազոտական	48
Գիտական սեմինար	12
Գիտահետազոտական աշխատանք	18
Գիտահետազոտական պրակտիկա	3
Գիտամանկավարժական պրակտիկա	3
Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12
Ընդամենը	120

II. Մագիստրոսի ուսումնական բեռնվածությունը և աշխատածավալը

1) Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) մագիստրոսի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի,ուսման տևողությունը 2 տարի է:

2) 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

3) Ուսումնական տարվա տևողությունը 20 շաբաթ է, որից 14-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին իսկ 6-ը նախատեսված է նախապատրաստման գործընթացի և քննաշրջանի համար: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

4) Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի: Ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը որոշ դեպքերում սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

III. Մագիստրոսի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը և չափանիշները

1) Մագիստրոսների գիտելիքների գնահատման համար կիրառվում է Համալսարանում գործող 100 միավորանոց սանդղակը՝ համապատասխան ECTS համակարգում գործածվող տառային նիշերի: Դասընթացի գնահատման համար գործածվում է գնահատականի բազմագործոն գնահատման սկզբունքը:

Գնահատման համակարգը.

2) *<u>Աղյուսակ 3</u>*

Գնահատականը	***Նշանակումը***	***Թվանշանը***	***Միավորը***
Գերազանց	A + A A -	4,0 4,0 3,7	95-100 87-94 81-86
Լավ	B+ B B-	3,3 3,0 2,7	75-80 67-74 61-66
Բավարար	C+ C C-	2,3 2,0 1,7	55-60 46-54 40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

3) Մագիստրոսի ստուգման գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

4) Դասընթացներից, որոնցից մագիստրոսը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

IV. **Միավորների բաշխումն՝ ըստ գործոնների**.

1) ***Տեսական դասընթացների համար***

Աղյուսակ 4

Գնահատվող աշխատաձևերը	**Ընդհանուր գնահատականի կառուցվածքը**
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Գիտելիքների ընթացիկ բանավոր ստուգում	25 միավոր
գ) Գիտելիքների ընթացիկ գրավոր ստուգում	25 միավոր
դ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում (ավարտական քննություն)	40 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 **միավոր**

2) **Տարբերակ** 2. **Գործնական ուղվածություն ունեցող դասընթացների համար**

Աղյուսակ 5

Դասընթացի աշխատաձևերը	**Գնահատման կառուցվածքը**
ա) Մասնակցությունը դասընթացին	10 միավոր
բ) Ընթացիկ ստուգումներ	40 միավոր
գ) Գիտելիքների ամփոփիչ ստուգում (ավարտական քննություն)	50 միավոր
Ընդհանուր գնահատականը	100 **միավոր**

ա) Ծանոթություն 1. Տարբերակ 1-ը կիրառվում է, երբ դասախոսը կարևորում է գրավոր աշխատանքի և բանավոր ներկայացման առանձին-առանձին ստուգումը և գնահատումը, ընդ որում՝ այդ երկու աշխատաձևերից յուրաքանչյուրին տրվող միավորների քանակը ըստ կարևորության կարող է տարբեր լինել, սակայն այդ երկու աշխատաձևերին տրվող միավորների գումարը չի կարող բարձր լինել 40 միավորից:

բ) Ծանոթություն 2. Տարբերակ 2–ը կիրառվում է, երբ դասընթացն առավելապես գործնական ուղղվածություն ունի, և դասախոսը չի կարևորում գրավոր և բանավոր

ստուգումներն ու դրանց առանձին-առանձին գնահատումը: Ընթացիկ ստուգումներին կարող է տրվել 40 միավոր:

Երկու տարբերակներում էլ գիտելիքների ամփոփիչ ստուգմանը տրվող միավորների քանակը չի կարող գերազանցել 40 միավորը:

գ) Ծանոթություն 3. Գիտական սեմինարները, պրակտիկաները, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքները ենթակա են գնահատման ստուգված/ չստուգված ձևաչափով, որը չի ենթադրում գործոնային հաշվարկ: Ստուգումը կատարվում է մագիստրոսի գիտական ղեկավարի կողմից:

3) **Մագիստրոսական թեզի գնահատման համակարգը**

Աղյուսակ 6

ՀՀ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	ՄԻԱՎՈՐՆԵՐԸ	ԹՎԱՆՇԱՆԸ	ՏԱՌԸ
1	գերազանց	95-100 87-94 81-86	4,0 4,0 3,7	A + A A -
2	լավ	75-80 67-74 61-66	3,3 3,0 2,7	B+ B B-
3	բավարար	55-60 46-54 40-45	2,3 2,0 1,7	C+ C C-
4	անբավարար	0-39	1,0	D
5	չներկայացած	-	-	F

4) Քննական տեղեկագրում դասախոսի կողմից մինչև դասընթացի ավարտական քննության սկիզբը լրացվում են բազմագործոնային համակարգով նախատեսվող գնահատումների արդյունքները, իսկ քննությունն անցկացնելուց հետո՝ նաև վերջինիս արդյունքները՝ համարժեք թվով և տառերով:

5) Քննությունը համարվում է հանձնված, եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը գերազանցում է 40 միավորը:

6) Մագիստրոսի հեռացումը, ազատումը համալսարանից և վերականգնումը կատարվում է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններից ուսանողների ազատման, հեռացման

և վերականգնման կարգ»-ի և դրա հիման վրա ընդունված՝ Գավառի պետական համալսարանի համապատասխան կարգի համաձայն:

V. Մագիստրոսի գիտական ղեկավարի նշանակումը և մագիստրոսական թեզի թեմայի հաստատումը

1) Մագիստրոսի գիտական ղեկավարի նշանակման ընթացակարգը ներառում է.

ա) ծրագրի ղեկավարի հետ խորհրդակցությունների անցկացում, որոնց ընթացքում ճշգրտվում են մագիստրոսի հետազոտական հետաքրքրությունները, կազմակերպվում է հանդիպում տվյալ մագիստրոսական ծրագիրն իրականացնող համապատասխան մասնագետի հետ,

բ) մագիստրոսների գիտական ղեկավարների համաձայնեցված թեկնածությունների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի հաստատմանը, գիտական ղեկավարի նշանակում և համապատասխան գրանցման կատարում մագիստրոսի անհատական աշխատանքային մատյանում:

2) Մագիստրոսական թեզի թեմայի հաստատման ընթացակարգը ներառում է.

ա) գիտական ղեկավարի հետ թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդա-տրվությունների անցկացում,

բ) մագիստրոսական թեզերի թեմաների համաձայնեցված ձևակերպումների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) հաստատմանը և համապատասխան գրանցման կատարում մագիստրոսի անհատական աշխատանքային մատյանում:

3) Մագիստրոսի գիտական ղեկավարի գործառույթները պայմանավորված են Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված կառուցվածքով և բովանդակությամբ:

VI. Մագիստրոսական ծրագրի ուսումնական բաղադրիչի իրականացման ընթացակարգը

1) Ուսումնական օրացույցը և դասընթացների ժամանակացույցը.

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում հրապարակվում է (տպագիր ձևով կամ Համալսարանի պաշտոնական համացանցային կայքում տեղադրելով, ինչպես նաև ծրագրում ընդգրկված մագիստրոսներին էլեկտրոնային փոստով ուղարկելու միջոցով) տվյալ կիսամյակի

ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույց, որտեղ ըստ օրերի նշվում են ուսուցման սկիզբը և ավարտը: Հրապարակվում են նաև դասացուցակը, առաջարկվող բոլոր դասընթացների և դրանց քննությունների ժամանակացույցը, որը բովանդակում է մանրամասն տեղեկատվություն դասախոսի, դասընթացների անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ:

2) Ուսումնառության երկրորդ և երրորդ կիսամյակների առաջին շաբաթվա ընթացքում մագիստրոսը գիտական ղեկավարի հետ կազմում է տվյալ կիսամյակի ուսումնառության իր անհատական ծրագիրը, որում արձանագրվում են ուսումնական պլանի տիտղոսային ծրագրի, կամընտրական դասընթացների և հարակից ծրագրերի ընտրովի դասընթացների բաղադրիչներով տվյալ կիսամյակի համար նախատեսվող այն դասընթացները, որոնց մասնակցելու համար նա գրանցվել է: Ուսումնառության անհատական ծրագիրը մագիստրոսի անհատական աշխատանքային մատյանի մասն է: Գիտական ղեկավարի երաշխավորությամբ մագիստրոսը կարող է հարակից ծրագրերի ընտրովի դասընթացների բաղադրիչով նախատեսվող դասընթացի փոխարեն գրանցվել տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացների բաղադրիչով նախատեսվող որևէ լրացուցիչ դասընթացի, եթե նախապես հրապարակված ժամանակացույցով դասընթացների զուգադիպում չի առաջանում: Դասընթացների գրանցման համար սահմանված վերջնաժամկետից հետո երկու շաբաթվա ընթացքում գիտական ղեկավարի երաշխավորությամբ մագիստրոսը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության անհատական ծրագրում, որի մասին նրա անհատական աշխատանքային մատյանում կատարվում է համապատասխան գրանցում: Դասընթացի փոփոխությունը կարող է կատարվել նաև մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման նախաձեռնությամբ, եթե տվյալ դասընթացում բավարար թվով մասնակիցներ չեն ընդգրկվել: Մագիստրոսի նախաձեռնությամբ դասընթացի փոփոխությունը սահմանված ժամկետից հետո թույլատրվում է միայն դասընթացը վարող դասախոսի համաձայնությամբ, սակայն ոչ ուշ, քան դասընթացն սկսելուց հետո երկու շաբաթվա ընթացքում:

VII. Մագիստրոսական ծրագրի հետազոտական բաղադրիչի իրականացման ընթացակարգը

1) Հետազոտական մոդուլների ժամանակացույցը.

Յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում ծրագրի ղեկավարը կազմում և մագիստրոսներին է ներկայացնում տվյալ կիսամյակում ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող կրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը: Այն, ըստ կիսամյակի բովանդակության, ներառում է գիտական ղեկավարի սեմինարների և պրակտիկաների կատարման ժամանակացույցերը:

VIII. Մագիստրոսական ծրագրի ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը

1) Ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը.

Մագիստրատուրայի ծրագրի ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում է ուսումնառության վերջին 8 շաբաթների ընթացքում և ներառում է.

ա) թեզի ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի քննարկմանը: Թեզի հետ միասին ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը բովանդակում է մագիստրոսի աշխատանքի հիմնավորված բնութագիրը,

բ) մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից պաշտոնական գրախոսի նշանակում,

գ) մագիստրոսական թեզի աշխատանքային քննարկում մագիստրոսական ծրագրի ղեկավարի, մագիստրոսի գիտական ղեկավարի, պաշտոնական գրախոսի կողմից՝ մագիստրոսի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում վերամշակել թեզը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում թեզը մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից երաշխավորվում է պաշտպանության: Եզրակացության մեջ նշվում է թեզի հիմնավորված գնահատականը:

դ) Մագիստրոսական թեզի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման առարկայական հանձնաժողովի նիստում և համապատասխան մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման շնորհում:

IX. Մագիստրոսական թեզի գնահատման կարգը

1) Մագիստրոսական թեզի պաշտպանության գնահատումը կատարվում է 100 միավորանոց սանդղակով (Աղյուսակ 6): Գնահատականը ձևավորվում է գիտական

ղեկավարի, պաշտոնական գրախոսի և պաշտպանության ընթացքում թեզի ներկայացման և դրա շուրջ արված հարցադրումներին տրված պատասխանների գնահատումների հիման վրա:

X. Մագիստրոսական ծրագրի ավարտական պահանջները

1) Որակավորում ստանալու համար մագիստրոսը պետք է ծրագրի կատարման ընթացքում լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որից 72 կրեդիտ՝ ուսումնական հատվածից (այդ թվում՝ 54 կրեդիտ պարտադիր դասընթացներից, իսկ 18 կրեդիտ՝ ուսանողի կողմից ընտրովի դասընթացներից) և 48 կրեդիտ՝ հետազոտական հատվածից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Նախաբան ……	2
I.	Ուսումնական գործընթացը, ԳՊՀ մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման սկզբունքները……	3
II.	Մագիստրոսի ուսումնական բեռնվածությունը և աշխատածավալը……	5
III.	Մագիստրոսի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը և չափանիշները……	5
IV.	Միավորների բաշխումն՝ ըստ գործոնների……	6
V.	Մագիստրոսի գիտական ղեկավարի նշանակումը և մագիստրոսական թեզի թեմայի հաստատումը……	9
VI.	Մագիստրոսական ծրագրի ուսումնական բաղադրիչի իրականացման ընթացակարգը……	9
VII.	Մագիստրոսական ծրագրի հետազոտական բաղադրիչի իրականացման ընթացակարգը……	10
VIII.	Մագիստրոսական ծրագրի ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը……	11
IX.	Մագիստրոսական թեզի գնահատման կարգը……	11
X.	Մագիստրոսական ծրագրի ավարտական պահանջները……	12

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հասցե՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզ**,
ք. Գավառ, **Հրանտ Հակոբյան** 1, 1201

Հեռախոս՝ 060 46 02 01, 060 46 12 99,
060 46 03 02, 060 46 12 43

Ֆաքս՝ 037460 46 02 01

Էլ. փոստ՝ info@gsu.am, infogsu@mail.ru
Կայքէջ՝ www.gsu.am